


**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Մարզկենտրոնը՝ ք. Եղեգնաձոր



ՀՀ Վայոց ձորի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավային հատվածում:

Մարզը պետական սահմանով սահմանակից է.

- հարավում՝ Նախիջևանին,
- հյուսիսում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզին,
- արևելքում՝ ՀՀ Սյունիքի մարզին,
- արևմուտքում՝ ՀՀ Արարատի մարզին:

<i>Մարզի տարածաշրջանները՝</i>	<i>Քաղաքները՝</i>
Վայք Եղեգնաձոր	Եղեգնաձոր, Ջերմուկ, Վայք

Տարածքը	2308 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7.8 %
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	41
Քաղաքներ	3
Գյուղեր	52
Բնակչության թվաքանակը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ	55.8 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	19.3 հազ. մարդ
գյուղական	36.5 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2009թ.	1.7 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	34.6 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	209260 հա
այդ թվում՝ վարելահողեր	16217 հա

Վարչատարածքային բաժանումը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ

	Տարածքը, քառ. կմ	Մայրաքաղաքը/մարզ-կենտրոնը	Մարզկենտրոնի հեռավորությունը Երևանից, կմ *	Բնակչության խտությունը, մարդ/կմ ²	Համայնքներ		
					քաղաքային	վարչական շրջաններ	գյուղական
Հայաստանի Հանրապետություն	29743	Երևան	-	109	48	12	866
ՀՀ Վայոց ձորի մարզ	2308	Եղեգնաձոր	123	24	3	-	41

ՀՀ Վայոց ձորի մարզի քաղաքները

(հունվարի 1-ի դրությամբ)

Քաղաքի անվանումը	Քաղաքի կարգավիճակ ստանալու տարեթիվը	Հեռավորությունը մինչև Երևան, կմ	Մշտական բնակչության թվաքանակը, հազ.մարդ				
			2005	2006	2007	2008	2009
Եղեգնաձոր	1995	123	8.2	8.2	8.2	8.2	8.2
Ջերմուկ	1961	175	5.3	5.3	5.3	5.2	5.2
Վայք	1995	132	5.9	5.9	5.9	5.9	5.9

ՀՀ Վայոց ձորի մարզի սահմանները վարչատարածքային տեսակետից քիչ են փոփոխությունների ենթարկվել իր՝ պատմական Սյունիք նահանգի Վայոց ձոր գավառի սահմաններից: Սահմանների կայունությունը բացատրվում է տարածքի մակերևույթի առանձնահատկությամբ: Վայոց ձորը, որպես գոգահովիտ, շրջապատված է բարձր լեռներով, ջրբաժան լեռնաշղթաներով, որոնք, յուրահատուկ բնական պատնեշներ հանդիսանալով նրա և հարևան տարածքների միջև, այն դարձնում են աշխարհագրական մի ամբողջություն:

Վայոց ձորը բնակավայր է եղել ամենավաղ՝ քարեդարյան ժամանակներից սկսած և կյանքը հարատևել է առանց ընդհատումների:

Պատմական Վայոց ձորը Սյունիք նահանգի ամենամեծ նահանգներից էր և որոշ տարիներ եղել է նրա վարչական կենտրոնը: Վայոց ձորը մեծ դեր է խաղացել միջնադարյան հայ մշակույթի զարգացման գործում: Այնտեղ է գործել Գլաձորի (XIIIդ.) հռչակավոր համալսարանը, ուր աշխատել և ստեղծագործել են տաղանդավոր գիտնականներ, գրիչներ և մանրանկարիչներ, որոնց գրած ու նկարագրած բազմաթիվ ձեռագրեր այսօր էլ հիացմունք են պատճառում: Վայոց ձորում են գտնվում նյութական մշակույթի հույակապ հուշարձաններ՝ Նորավանքը, Գնդևանքը, Շատի, Թանահատի, Հերմոնի, Եղեգիսի վանքերը, Սուլեմա (Մելիմի) քարավանատունը և բազմաթիվ այլ ճարտարապետական զարմանահրաշք կոթողներ, որոնք զբոսաշրջիկների մշտական այցելության վայրեր են:

Վայոց ձորը գտնվում է Արփա գետի ավազանում (2630 կմ²), արևելքից շրջապատված է Ջանգեզուրի լեռնաշղթայի հյուսիսային հատվածով, սահմանակից է Սյունիքի Ծղուկ և Արցախի Ծար գավառներին, հարավից՝ Սյունիքի Ճահուկ գավառին:

Արևմուտքից Վայոց ձորի լեռնաշղթաները աստիճանաբար ցածրանալով հասնում են Շարուրի դաշտավայրը (Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն):

Հյուսիսից շրջապատված է Վարդենիսի լեռնաշղթայով, սահմանակից դառնալով Գեղարքունիք և Սոթք գավառներին:

Արտակարգ խայտաբղետ է Վայոց ձորի մակերևույթը: Հրաբխային ուժերը, երկրաշարժերը, Արփա գետի և նրա վտակների ջրերը առաջացրել են տարբեր ուղղություններով ձգվող բազմաթիվ լեռնաշղթաներ՝ մեծ ու փոքր գագաթներով, խորհրդավոր ձորեր, լեռնացքներ, սարահարթեր, գոգավորություններ, դաշտեր, մարգագետիններ և բնական բազմապիսի կերտվածքներ, որի ամենավառ օրինակն է Ջերմուկի հիասքանչ ջրվեժը (60 մ):

ՀՀ Վայոց ձորի մարզի կլիման ընդհանուր առմամբ ցամաքային է՝ ցուրտ կամ չափավոր ցուրտ ձմեռներով և շոգ կամ տաք ամառներով: Օդի առավելագույն աստիճանը հարավային շրջաններում հասնում է + 41° C-ի, իսկ բացարձակ նվազագույնը՝ -35° C-ի: Տեղումները կազմում են 300-ից 700 մմ:

ՀՀ Վայոց ձորի մարզն ունի կենդանական և բուսական բազմազան աշխարհ: Տարածքի 5.7%-ը կազմում են բնական անտառները:

Տնտեսությունը

2009թ.-ին *մարզի տնտեսության հիմնական ճյուղերի* տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 0.9 %,
- գյուղատնտեսություն՝ 2.2 %,
- շինարարություն՝ 0.9 %,
- մանրածախ առևտուր՝ 0.4 %,
- ծառայություններ՝ 0.4 %:

Մարզի *տնտեսության* ընդհանուր ծավալում գերակշռողը գյուղատնտեսությունն է: Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են անասնաբուծությամբ, որի արտադրանքը կազմել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի 63%-ը:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև թռչնաբուծությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունը:

Արդյունաբերության ոլորտում հիմնականում զարգացած են ոչ ոգելից ըմպելիքի՝ «Ջերմուկ» հանքային ջրերի և խաղողի գինու արտադրությունները, որոնց տեսակարար կշիռները 2009թ. հանրապետության հանքային ջրերի և խաղողի գինու արտադրությունների ընդհանուր ծավալում, համապատասխանաբար, կազմել են՝ 59.5% և 9.4%:

Քեոնաուղնորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: Մարզով է անցնում Հայաստանն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության հեռանկարային զարգացման գործում:

Մարզում ակնհայտ են *ներքին և արտաքին զբոսաշրջության* զարգացման մեծ հեռանկարները:

Եղեգնաձոր քաղաքը

Եղեգնաձոր քաղաքը (2009թ. տարեվերջին՝ 8.2 հազ. բնակիչ) համարվում է պատմական Սյունիքի հնագույն բնակավայրերից մեկը և գտնվում է Երևանից 123 կմ հեռավորության վրա: Քաղաքի շրջակայքում պահպանվել են Կիլոսյան ամրոցի մնացորդներ:

Եղեգնաձոր քաղաքի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռող ոլորտներն են *արդյունաբերությունն ու շինարարությունը*:

Արդյունաբերության ոլորտում հիմնականում զարգացած են *խաղողի գինու, էլեկտրասարքավորանքի արտադրությունները*, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև *պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունները*:

Վայք քաղաքը

Վայք քաղաքը (խորհրդային տարիներին՝ Ազիզբեկով) գտնվում է Երևանից 132 կմ հեռավորության վրա: Բնակչության թվաքանակը 2009թ. տարեվերջին կազմել է 5.9 հազ. մարդ: Քաղաքի մուտքը զարդարում է «Սուրբ Տրդատ» նորակառույց եկեղեցու հոյակապ շենքը:

Վայք քաղաքի տնտեսության հիմնական ճյուղն *արդյունաբերությունն է*: Հիմնականում զարգացած են *հանքային ջրերի և ոչ ալկոհոլային խմիչքների, շինանյութերի, ձեռագործ գորգերի արտադրությունները*:

Ջերմուկ քաղաքը

Ջերմուկ քաղաքը (2009թ. տարեվերջին՝ 5.2 հազ. բնակիչ) գտնվում է 2070 մ բարձրությամբ լավային սարավանդի վրա (հեռավորությունը Երևանից 175 կմ է, մարզկենտրոնից՝ 53 կմ):

Ջերմուկը լայն ճանաչում ունի որպես առողջարանային քաղաք: Ճանաչված առողջարաններից են «Ջերմուկ»-ը, «Նոր կյանք»-ը, «Գլաձոր»-ը, «Աղաջանյանի անվան առողջարան»-ը և «Արարատ»-ը:

Քաղաքի անվանումը կապված է հանքային տաք աղբյուրների՝ ջերմուկների հետ:

Ջերմուկ քաղաքի տնտեսության առաջատար ճյուղը ոչ ոգելից ըմպելիքի, <<**Ջերմուկ**>> **հանքային ջրի**, արտադրությունն է, որի տեսակարար կշիռը 2008թ. մարզի հանքային ջրերի արտադրության ընդհանուր ծավալում կազմել է 95.2%:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը՝ մարդ	
		2009թ. հունվարի 1-ի դրությամբ	2010թ. հունվարի 1-ի դրությամբ
Եղեգնաձոր	ք. Եղեգնաձոր	8181	8184
Վայք	ք. Վայք	6267	5912
Ջերմուկ	ք. Ջերմուկ	5911	6226
	ք. Կեչուտ		

* ՀՀ Վայոց ձորի մարզի քաղաքային համայնքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ընթացիկ հաշվառմամբ:

ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը** , մարդ	
			2009թ. հունվարի 1-ի դրությամբ	2010թ. հունվարի 1-ի դրությամբ
1	Ագարակաձոր		1417	1357
2	Ագատեկ		527	564
3	Աղավնաձոր		2091	2060
4	Աղնջաձոր		485	471
5	Արենի	• Արենի • Ամաղու	1811	1892
6	Արին		236	266
7	Արտաբույնք		1154	1146
8	Արտավան		295	313
9	Արփի		1218	1227
10	Բարձրունի		393	401
11	Գետափ		2355	2377
12	Գլաձոր		2687	2706
13	Գնդեվազ		963	1007
14	Գնիշիկ	• Գնիշիկ • Մոզրով	204	212
15	Գողթանիկ		220	214
16	Գումք	• Գումք • Ախտա • Կապույտ	271	280
17	Ելփին		1394	1305
18	Եղեգիս		505	511
19	Զատիթափ	• Զատիթափ • Հորաղիս	1537	1543
20	Զեղեա		207	219
21	Թառաթումբ		643	583
22	Խաչիկ		1047	1028
23	Խնձորուտ		472	525
24	Կարմրաշեն		212	289
25	Հերիեր		1004	1004
26	Հերմոն	• Հերմոն • Արատես • Կալասար	171	188

** ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղական համայնքների այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղական համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 866 գյուղական համայնքների մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ և ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2010թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +5.1%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը** , մարդ	
			2009թ. հունվարի 1-ի դրությամբ	2010թ. հունվարի 1-ի դրությամբ
27	Հորբատեղ		264	265
28	Հորս		303	307
29	Մալիշկա		5292	5316
30	Մարտիրոս		664	663
31	Նոր Ազնաբերդ		138	166
32	Շատին		2013	2041
33	Չիվա		1013	1027
34	Ռինդ		1516	1535
35	Սալի		247	252
36	Սարավան	<ul style="list-style-type: none"> • Սարավան • Ուղեձոր 	241	272
37	Սերս		230	222
38	Վարդահովիտ	<ul style="list-style-type: none"> • Վարդահովիտ • Գետիկվանք • Սևաժայռ 	235	236
39	Վերնաշեն		1312	1314
40	Փոռ		145	143
41	Քարագլուխ		909	875

**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2009թ.**

	Ընդամենը	նրանցից	
		կանայք ¹	տղամարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10000	5011	4989
Ծնվածներ, մարդ	125	62	63
Մահացածներ, մարդ	89	45	44
Ամուսնություններ	60	X	X
Ամուսնալուծություններ	8	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	39.0	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ`			
նախադպրոցական	126	63	63
հանրակրթական	1357	644	713
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան-ստեղծագործական կենտրոններ	143	98	45
նախնական մասնագիտական (արհեստագործական)	8	1	7
միջին մասնագիտական	62	42	20
բարձրագույն մասնագիտական	86	63	23
Առողջապահության ոլորտ`			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	31601
Մարզիկներ, մարդ	426	75	351
Զբաղվածներ, մարդ	4519
նրանցից` գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից` գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	190	143	47
բժիշկներ	20
միջին բուժանձնակազմ	53
Գործազուրկներ /պաշտոնապես գրանցված/, մարդ	198	150	48
Մոցիակական ապահովության ոլորտ			
ընդհանուր կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1857
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	452	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	36614
թատրոն	-	-	-
համերգ	-	-	-
թանգարան	162
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	36	X	X
այդ թվում` ոչ մեծ ծանրության	19	X	X
միջին ծանրության	10	X	X
ծանր	6	X	X

¹ Ցուցանիշները հաշվարկային են: